Աթոռոյն եւ զծանրութիւն պարտուց, ուստի յազգային ժողովի սահմանեցին լինել ծայրագոյն կառավարիչ Երուսաղէմի նախկին Պատրիարք Կոստանդինուպոլսոյ Պօղոս Արք Եպիսկոպոսի, և գնալ անդ Արքունի հրովարտակաւ ընդ Մարկոս Եպիսկոպոսի, բառնալ յԱթոռոյն զԳաբրիէլ Պատրիարք եւ տանել 'ի Կոստանդինուպոլիս · այս աւետեաց լուր զոր գրեաց Կարապետ Պատրիարք յԵրուսաղէմ, ուրախացոյց յոյժ զմիաբանս, և անհամբեր հոգւով սպասէին գալստեան նորա։

Ապա ծանուցեալ զինդիրն Արքայի՝ հանին հրովարտակ, և Ոսմիկան Ահմէտ Աղա · գրեցան թուղթք յանձնարական 'ի Դամասկոս և Երուսաղէմ ըստ մտաց հրովարտակին, և առ այլ և այլ անձինս 'ի տեղեկութիւն, գրեաց և Կարապետ Պատրիարք առ համբրէն միաբանական դասս, յորում յետ յայտ առնելոյ զդառնութիւն ժամանակին, զպակասութիւն ուխտաւորաց, զառաւելութիւն պարտուց և տոկոսաց, զպաշարիլն Աթոռոյն 'ի սէս սէս նեղութեանց և ճախորդութեանց, ասէ՝ « Ուստի անչափ և անսպառ նեղութեան Ս · Աթոռոյն ոչ տոկալով սիրտ ազգասէր Ամիրայից, բազմիցս 'ի խոյզ և 'ի խնդիր ելանէին մեծահանդէս ժողովով հանդերձ արհեստաւորք գտանել զելս բարելաւութեան, որ եւ ըստ բերման ժամանակիս յօգուտ Ս · Աթոռոյն յարմար դատեցին զԳաբրիէլ Պատրիարք Ս · Եղբայրն մեր կոչել 'ի Կոստանդինուպոլիս, խորհիլ 'ի միասին գտանել զհնարս դիւրութեան, և յաջողութիւն պարտուց · թէպէտ և գրով ազգին և եթէ կարելի էր հրաւիրել զնա աստ, սակայն 'ի ճանապարհի ոչ կարէր հանդիստ ժամանել 'ի խառնակութենէ կողմանց, 'ի Ղափար, և այլ անկանոն տրոց, ըստ մեծութեան անուան իւրոյ, վասն որոյ արժան դատեցաւ առնուլ հրովարտակ, եւ Տէրութիւնն յօժարութեամբ ետ զայն, և առաքեցաւ ընդ Արքունի առն 'ի կողմանէ ազգին իբր հրաւիրակ Ադրիանուպոլսեցի Մըկըրտիչ վարդապետ։ Արդարեւ հրաւէրս տարօրինակ եւ չէ պատահեալ ցարդ · բայց եղանակն ստիպեաց առնել արտաքոյ օրինաց, զի ո՞ր սիրտ կարէ տոկալ, յորժամ զԱթոռն յայս մեծամիշտ տագնապի տեսանէ, մեք և օրհնեալ ազգն մեր գոլով հեռի անձամբ և միջոցաւ, հաշիմք 'ի տա-